Բերդը բոլորի համար

Նպատակը

Բերդի «Մարդիգյան» երեխաների պաշտպանության կենտրոնը հաշմանդամություն ունեցող անձանց համար լիովին հասանելի դարձնելու համար տեղադրել թեքահարթակներ, ավտոմատ դռներ, խելացի նավիգացիոն համակարգեր և հարմարեցված զուգարաններ, որպեսզի բոլոր երեխաներն ու ընտանիքները կարողանան անվտանգ, անկախ և արժանապատվորեն օգտվել անհրաժեշտ ծառայություններից:

Նկարագրություն

ՀՕՖ-ի «Մարդիգյան» երեխաների պաշտպանության կենտրոնը յուրաքանչյուր տարի տրամադրում է թերապևտիկ ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ավելի քան 160 երեխայի և նրանց ընտանիքներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց: Սակայն Բերդ քաղաքում բացակայում են կառույցները, որոնք լիարժեք հարմարեցված կլինեն ֆիզիկական, տեսողական, լսողական և այլ խնդիրներ ունեցող անձանց ծառայություններ մատուցելու համար: Արդյունքում նրանք ստիպված են համայնքից դուրս ստանալ անհրաժեշտ օգնություն, ինչը հսկայական ծանրություն է հատկապես սահմանամերձ գոտում ապրող խոցելի այս ընտանիքների համար:

Ուստի, Հայ օգնության Ֆոնդի ԱՅՈ հարթակը, խորապես գիտակցելով այս խնդրի հրատապությունը, պարտավորվում է ստեղծել բարեկարգ, անվտանգ և հարմարավետ միջավայր:

Հավաքագրված գումարով տեղադրվելու են ռամպաներ, ավտոմատ դռներ, ներդրվելու է խելացի նավիգացիոն համակարգեր, ինչպես նաև հարմարեցվելու են սպասարկման բոլոր տարածքները: Այս փոփոխությունները թույլ կտան հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի հեշտությամբ և ինքնուրույն օգտվել ծառայություններից՝ ապահովելով նրանց արժանապատիվ և լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:

Բյուջե

Անվանում	Քանակ / միավոր	Գին	Գումար
Մուտքի սենսորային դուռ 1.65*2.75	1 (հատ)	700,000	700,000
Մուտքի դռան Ժալյուզ	1 (հատ)	300,000	300,000
Սանհանգույցի վերանորոգում և կահավորում	1 (հատ)	1,800,000	1,800,000
Սանհանգույցի կոյուղու ապամոնտաժում	1 (հատ)	700,000	700,000
Stair lift / Platform lift/Երկրորդ հարկ հասանելիություն ապահովող սարքավորում	1 (հատ)	6,000,000	6,000,000
Տեղեկատվական ցուցանակներ / տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար	8 (հատ)	5,000	40,000
Տեղեկատվական ցուցանակներ՝ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար	8 (հատ)	2,500	20,000
Բռնաձողեր	65 (մետր)	2,300	149,500
Սմարթ էկրան	1 (հատ)	150,000	150,000
Տեսահոլովակի պատրաստում սուրդո թարգմանությամբ	1 (հատ)	450,000	450,000
Աշխատակազմի ուսուցում/ Հարմարեցումների ճիշտ օգտագործում, շահառուների աջակցություն	8 (ժամ)	30,000	240,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար
= 382 ՀՀ դրամ

֏10,649,500